Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«21» օգոստոսի 2023 թ. թիվ 186 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ

I Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ապագա մագիստրոսների ընդհանուր և մասնագիտական կարողությունների ձևավորման գործոնի՝ ինքնուրույն ուսումնական և հետազոտական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ պահանջներն ու պայմանները:
2. Ուսումնառության գործընթացում ինքնուրույն աշխատանքի ներառումը յուրահատուկ ձև է, որի կատարման ընթացքում ուսանողը պետք է ցուցաբերի որոնողական, հետազոտական, մտավոր և վերլուծական ընդունակություններ:
3. Աշխատանքի ձևերը որոշվում են՝ պայմանավորված դասավանդվող առարկայի բովանդակությամբ, և կարող են լինել ուսումնական կամ ուսումնահետազոտական բնույթի:
4. Աշխաւոանքի ձևերը, ծավալները և բովանդակությունը որոշում են ամբիոնները՝ համաձայն ուսումնական պլանների և ծրագրերի, ինչն ամրագրվում է առարկայի ուսումնամեթոդական փաթեթում :

II Նպատակը և խնդիրները

5. Ինքնուրույն աշխատանքի (ԻԱ) նպատակն է ուսանողների ինքնակրթության պւսհանջմունքի դաստիարակումը, իմացական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, մասնագիտական կարողությունների և հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորումը:
6. Ուսանողի ԻԱ նպաստում է նրա պատասխանատվության և կազմակերպվածության բարձրացմանը, ինչպես նաև մասնագիտական խնդիրների ստեղծագործական լուծմանը :
7. *Ուսանողների ինքնուրույն աշխատանքի խնդիրներն են.*

7.1 Նպաստել վերլուծական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, այն է՝

- սովորել ինքնուրույն ձևակերպել և պլանավորել աշխատանքի կատարմանն ուղղված անհրաժեշտ քայլերը,
- յուրացնել ինքնուրույն ուսումնասիրության (հետազոտության) համար ընտրված ուսումնական նյութերը:

7.2 Նպաստել ուսանողների տեղեկատվական-տեխնոլոգիական, հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այն է՝

- պլանավորել ու կազմել ինքնուրույն աշխատանքի ծրագիրը,
- սեղմագրել ուսումնական գրականությունը,
- ինքնուրույն նախապատրաստել և ներկայացնել զեկուցում, ելույթներ սեմինարներին և գործնական պարապմունքներին, ընտրել ուսումնական ծրագրի առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականություն, նախագծեր, անհատական և ստեղծագործական ու վերլուծական այլ աշխատանքներ,
- ամրապնդել ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները,
- զարգացնել իրավական, տեղեկատվական փաստաթղթերից և մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն,
- նպաստել ուսանողի ճանաչողական ունակությունների զարգացմանը:

III Ինքնուրույն աշխատանքի ձևերը

8. *ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողի ինքնուրույն աշխատանքի ձևերն են.*

8.1 ուսումնական առարկաների ծրագրով նախատեսած գրականության ուսումնասիրությունը,

8.2 նախապատրաստումը սեմինարներին, գործնական և անհատական

պարապմունքներին,
8.3 առարկայական ծրագրերում որպես ինքնուրույն աշխատանք ընդգրկված, բայց ուսումնական պարապմունքների ընթացքում ոչ ամբողջական լուսաբանված հարցերի ուսումնասիրումը,
8.4 անհատական և այլ աշխատանքներ կատարելու համար նյութերի ընտրությունը,
8.5 ուսանողական գիտական ընկերության շրջանակներում կատարվող գիտահետազոտական աշխատանքների, զեկուցումների, տեղեկատվական հաղորդումների պատրաստումը,
8.6 գիտական պարբերականներում հրապարակումների վերլուծությունը,
8.7 թարգմանությունների կատարումը,
8.8 հաշվետվությունների կազմումը (պրակտիկայի, գիտաժողովների մասնակցության) և այլն:

IV Ինքնուրույն աշխատանքի տեսակները և փուլերը

ա. Ինքնուրույն աշխատանքի տեսակները.

9. Ինքնուրույն աշխատանքները լինում են լսարանային և արտալսարանային: Լսարանային ինքնուրույն աշխատանքը կատարվում է ուսումնական պարապմունքների ընթացքում, ըստ դասախոսի հանձնարարության և նրա անմիջական ղեկավարությամբ: Արտալսարանային աշխատանքները կատարվում են դասախոսի հանձնարարականով, առանց վերջինիս անմիջական մասնակցության:
10. Առանց դասախոսի մասնակցության ուսանողի ինքնուրույն աշխատանքներր կարող են լինել՝

10.1 դասախոսի խորհրդատվությամբ ուսումնական գրականության մշակում,
10.2 ռեֆերատ,
10.3 նախապատրաստում սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին,
10.4 հոդվածների ծանոթացում և ներկայացում սեմինարին,
10.5 հետազոտությունների, դաշտային աշխատանքների, հարցումների, հարցազրույցների իրականացում և ներկայացում,
10.6 առաջադրանքների կատարում, խնդիրների լուծում, թեմայի շուրջ հաշվարկների կատարում և այլն:

11. Դասախոսի մասնակցությամբ ուսանողի ինքնուրույն աշխատանքները լինում են՝
11.1 ընթացիկ խորհրդատվություններ,
11.2 կոլոքվիում՝ դասընթացի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով,
11.3 հանձնարարությունների քննարկում,
11.4 լաբորատոր և հետազոտական աշխատանքների ընդունում,
11.5 խմբային աշխատանքների (նախագծերի) կատարում,
11.6 պրակտիկաների հաշվետվությունների կազմում և ներկայացում:

բ. Ինքնուրույն աշխատանքի փուլերը.

- նախապատրաստական - ուսանողը ծանոթանում է ինքնուրույն աշխատանքի կատարման ձևերին,
- վերարտադրողական - ուսանողը վերարտադրում է հանձնարարված նյութը (օրինակ՝ գիտական հոդվածը),
- որոնողական - ուսանողը կատարում է ինքնուրույն և /կամ դաշտային աշխատանք որոշակի առաջադրանքի համար նյութեր և տվյալներ որոնելու ուղղությամբ,

- տեսական-վերլուծական - ուսանողը դասակարգում, վերլուծում է որոնողական աշխատանքների արդյունքում իր հավաքած նյութերը, որոշում նրանց կարևորությունը տվյալ աշխատանքի համար(օրինակ՝ թեզի <<գրականության տեսությունը>>կազմելիս):
- փորձարարական - անհրաժեշտության դեպքում ուսանողն ինքնուրույն կատարում է փորձարարական աշխատանք,
- տեսական-փորձարարական - ուսանողն ինքնուրույն կամ դասախոսի օգնությամբ վերլուծում և ամփոփում է ստացված փորձարարական տվյալները և ներկայացնում այդ արդյունքները:
- տեսական-գործնական -անցկացրած հետազոտությունների հիման վրա ուսանողը կատարում է նախագծային կամ ավարտական աշխատանք:

V Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և կատարման պատասխանատուները

12. Ամբիոնը.

12.1 մշակում է ուսանողների ինքնուրույն աշխատանքին նվիրված ընթացակարգային փաստաթղթերը,

12.2 որոշում է ուսանողների ինքնուրույն աշխատանքի հիմնական ուղղությունները, բովանդակությունը, ձևերը և մեթոդները,

12.3 վերահսկում է դասավանդվող առարկաների ապահովվածությունը դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով,

12.4 որոշում է յուրաքանչյուր առարկայից ինքնուրույն ուսուցման ենթակա նյութի կոնկրետ բովանդակությունը և ծավալը՝ համաձայն ուսումնական պլանների,

12.5 մշակում են առաջադրանքներ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար,

12.6 ապահովում են ինքնուրույն աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը ամբիոնի բոլոր առարկաների համար,

12.7 վերահսկում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման կազմակերպումը և որակը:

13. Դասախոսները.

13.1 որոշում են առաջադրանքների ձևերը և թեմաները, ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունքների ներկայացման ժամկետները,

13.2 նախապատրաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի կատարման համար անհրաժեշտ մեթոդական նյութերը՝ համաձայն կոնկրետ պահանջների (առաջադրանքների),

13.3 անցկացնում են խորհրդատվություններ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքներին վերաբերվող հարցերի շուրջ:

VI Ուսանողների ինքնուրույն աշխատանքի պլանավորումը

14. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պլանավորվում է յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված բոլոր տեսակի պարապմունքներին տրամադրվող հաշվարկված ժամանակի հիման վրա՝ համաձայն ուսումնական պլանի:
15. Ամբիոնի և դասախոսի կողմից ինքնուրույն աշխատանքի պլանավորումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

15.1 ուսումնական գործընթացում դասավանդման որակը բարձրացնող ուսուցողական նոր տեխնոլոգիաների ներդրում,

15.2 տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ ուսանողի համար նյութի յուրացումը ավելի դյուրին դարձնելու և իրեն ավելի հարմար պահին օգտագործելու նպատակով,

15.3 համակարգչային թեստավորման կիրառում:

16. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները պետք է արտահայտվեն դասախոսների անհատական պլաններում:

VII Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպչական-մեթոդական ապահովումը

17. Ամբիոնի կրթական ծրագրերով սովորող ուսանողներին հանձնարարվող և նրանց կողմից կատարվող ինքնուրույն աշխատանքների՝ ըստ դասավանդվող առարկաների առանձնահատկությունների ձևերի ու մեթոդների ընտրության պատասխանատվությունը կրում են ամբիոնները:

18. Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար պետք է հստակ ձևակերպել նպատակներն ու խնդիրները, ինքնուրույն աշխատանքի ակնկալվող արդյունքները, ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, մասնագիտական կարողությունների ստուգման ձևերը:

19*. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պետք է ապահովված լինի.*

19.1 անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներով (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, անհատական առաջադրանքների փաթեթներ, տեղեկատուներ, ուսուցանող ծրագրեր, կիրառական ծրագրային փաթեթներ և այլն),

19.2 մեթոդական նյութերով,

19.3 ստուգող նյութերով (թեստեր, հարցաշարեր և այլն),

19.4 նյութական ռեսուրսներով,

19.5 դասախոսի և ուսումնական խորհրդատուների խորհրդատվություններով:

VIII Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգումը

20. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերն են.

20.1 բանավոր հարցումը,

20.2 անհատական, խմբային աշխատանքների, նախագծերի, առաջադրանքների, ռեֆերատների, զեկուցումների, հաշվետվությունների ստուգում,

20.3 առաջադրանքների ստուգումը,

20.4 զեկուցումները և այլն:

IX Եզրափակիչ դրույթներ

21. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են համաձայն ՀՀ օրենսդրության, Կենտրոնի Կանոնադրության, Կենտրոնում գործող այլ կարգերի համաձայն: Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2024-2025 ուսումնական տարվանից: